Փուճջը ՇԱԲԱԹ օրերը կը հրատարակուի :

Տարեկան բաժանորդագինն է երկու եւ կէս արծաթ Մեճիտ կանխիկ վճարելի, քէ մայրաքաղաքիս եւ իր արուարձանաց եւ քէ գաւառաց համար :

վեց եւ երեք ամսոց համար ալ բաժանորդ կընդունուի :

Տեղական եւ գաւառական թղթատարութեան ծախքը խմբագրութիւնը պիտի վճարէ :

Հատը 40 փարայ է, եւ կգտնուի մասնաւորապէս Պանճէ-գաբու ջրավաճառ եւ գրավաճառ Պօղոս աղայի խանութը :

ՓՈՒՉ

Ծանուցման տողը 3 դրուշ է մէկ անգամի համար : Աւելի աժան կըլլայ աւելի անգամներու համար :

Խմբագրութեան վերաբերեալ որ եւ է գիր ուղղելի առ Տնօրէն-Տէր Հ. Ս. Ալատճեան կ. Պօլիս Պալըգ-բազար Նաճիյէ խան վերի յարկ թիւ 16 :

ADRESSE
H. S. ALADJADJIAN
Directeur du journal Armenien Pountch
—16 Nafié-Han . Balouk-Pazar 16—
Constantinople

Թիւ 1915 ՇԱԲԱԹ 1884 ՆՈՅԵՄԲԵՐ 10

ԱԶԳԱՅԻՆ

Կրօնական Հիացում

Կան մարդկային այնպիսի ըզգացմունք, զոր սակաւք կունենան, և որոյ դէմ անհնուազ ամենազանը նախատինք, հեգնութիւն, ծաղր և այլ ամենայն առոյգինչ կը գրուին այդ սակաւուց մեծագոյն մասին կողմանէ. բայց կա՛ն այնպիսի ըզգացմունք, որ խորտմատ տարրացած են միլիոնաւոր մարդոց սրտից, մտաց ու հոգւոց մէջ, և այն ըզգացմանց դէմ՝ թո՛ղ թէ նախատինք, հեգնութիւն, ծաղր, այլ ամենաթեթեւ ակնարկութիւն մ՚իսկ կը դրդռէ, կը յուզէ, կը խռովէ այդ միլիոնաւորաց ամենախոհուններն և ամենիմաստուններն իսկ, և առանց արժանաւոր փոխարինութեան՝ եթէ ոչ անհնարին, գէթ դժուարագոյն եղած է և ցածուցանել զրդռութիւնն, յուզմունքն ու խռովութիւնն, և վերջ տալ նոցա ահաւոր հետեւանաց : Ա՛հա այս վերջին ըզգայնոց կարգէն և գլուխն իսկ է՝ կրօնական ըզգայնութիւն, ըզգայնոց վեհագոյնն ու սրբազնագոյնն, առ որ չհպելու և չվիրաւորելու համար ամեն ըզգուշութիւն կը լինի ո՛չ միայն քաղաքակրթեալ այլև ոչ-քաղաքակրթեալ երկրաց և իշխանութեանց մէջ իսկ, և ծանր ու խիստ պատիժներ սահմանեալ են՝ այս ըզգայման դէմ մինչև իսկ ամենաթեթեւ չարժում մ՚ընողներու համար :

Զարմացանք արդարև, թէ ձերիտէի-Հալատխի խմբագրութիւնը, որ քան զրազումս տեղեկագոյն է այս աշխարհածանօթ ճշմարտութեան, որ հասարակաց առաջնորդելու վարուկ ու կարեւոր պաշտօնն ու պարտաւորութիւնն ստանձնած է, և որ գիտէ թէ Օսմանեան կայսերական կառավարութիւնը չներեր կրօնական ըզգայմանց դէմ եղողներուն, և յատկապէս օրէնք ու պատիժ սահմանած և հրատարակած է, այդ խմբագրութիւնը, կըսեմ, որ կը չարունակուի դրեթէ կէս դարու չափ ժամանակէ հետէ, ինչպէս յանդգնած է՝ հեգնութեամբ լման հրատարակել, թէ «Գարահէօմրիւկի Տ. Թադէոս քահանայն մեռած է, Հաղորդութիւն կոչուած անխմոր հացին կըտորէն ուտելուն և զայն չկրնալ մարսելուն պատճառաւ :»

Ձերիտէի-Հալատխի խմբագրութիւնն եթէ երբէք չյիշեց կայսերական կառավարութեան արգելիչ օրէնքներն, եթէ երբէք չյիշեց թէ Օսմանեան տիեզերաւոստ վեհապետք իրենց հպատակ քրիստոնէից կրօնից ու կրօնական ըզգայմանց պահպանութեան համար մշտնջենաւոր յիշատակաց արժանի հովանաւորութիւն ու հոգածութիւն ունեցած են. եթէ երբէք չյիշեց թէ աշխարհի միլիոնաւոր քրիստոնէից համար նուիրական է Հաղորդութեան խորհուրդն, եթէ երբէք չյիշեց թէ Թուրքիոյ մէջ կան Օսմանեան հըպատակ միլիոնաւոր քրիստոնեայ ազգեր ու ժողովուրդներ. եթէ զայս ամենայն չյիշեց ձերիտէի Հալատխի հիներորդ լրագրոյ բազմանգամ խմբագրութիւնը, գոնէ չյիշե՞ց թէ կայ Օգոստափառ Սուլթան Համիտ քաջարթուն և աշխարհանազ վեհապետն Թուրքիոյ, իւր մեծայիշատակ նախնեաց առաքինի չաւղայ հարազատ հետեւող, և առաւել քան զնոսա պաշտպան և նախանձախնդիր կրօնի և պատուոյ հպատակաց. չը յիշե՞ց թէ Նորին կայսերական վեհափառութիւնը բնաւ և բնաւ չը ներեր իւր հպատակաց կրօնի դէմ ո՛ր և է նախատանաց, և կը գուրգուրայ անոնց կրօնին և պատուոյն վրայ, իբրև յԱստուծոյ առ ինքն տրուած նուիրական աւանդիւ վրայ :

Կը յաւելուք մեր պաշտօնակցին այս վիճակին վրայ. վասն զի անտարակոյս եմք թէ ծանր պատիժ պիտի ենթարկի, և ահա կը լսեմք թէ ապագրական մեծարելի վերատեսչութիւնն արդէն ի նկատ առնելով ձերիտէի այդ հըպատարակութիւնն, հաղորդած է որում անկ է :

Պատրիարքական ընտրութեան գործն սկսաւ այս շաբթու : Պատրիարքական փոխանորդ Գեր. Հայրը, ըստ Սահմանադրութեան պատրաստած լինելով Թուրքիոյ մէջ գտնուած բոլոր եպիսկոպոսաց ցուցակն, երկուշաբթի մատոյց զայն Կրօնական Ժողովոյ : Եւ սա քննելով նշանակեալ եպիսկոպոսաց եկեղեցական ու ազգային կեանքը, որոշեց՝ եկեղեցական Համագումար Ժողով հրաւիրել առաջիկայ երկուշաբթի : Ցուցակին մէջ նշանակեալ են 30 եպիսկոպոսաց անուանք, որոց ամենքն ալ Ս. Էջմիածնի մէջ ձեռնադրեալ են և Օսմանեան հպատակ : Ցայտնի է, թէ պատրիարքական ընտրելեաց համար այս հանգամանքս ևս կը պահանջուին ըստ տրամադրութեան սահմանադրութեան : Համագումար Ժողովոյ ներկայ դրութեամբ իւրաքանչիւր եկեղեցական թղթի մը վրայ կը գրէ ի կրօնականին անընդունելի չհամարած եպիսկոպոսաց անուններն, և քուէից համար լինելով, ցուցակի մը մէջ կը նշանակուին այդ անուանք՝ քուէից առաւելութեան կարգաւ : Եւ ահա այս ցուցակը Գեր. Փոխանորդ Հօր միջոցաւ կը մատուցուի Քաղաքական Ժողովոյ, որ նոյն ցուցակին մէջէն ըստ քաղաքական կանոնի ամենէն աւելի արժանաւոր եղող հինգ ընտրելի կորոշէ քուէից առաւելութեամբ, և Համագումար Ժողովոյ ցուցակին հետ կը մատուցանէ Ազգային Ժողովոյ, որոյ խորհրդարանին մէջ կը կախուին երկու ցուցակներն : Ազգային Ժողովն ալ, երկու ձեռնհաս ժողովոյ կարծիքն իմանալով, գաղտնի քուէարկութեամբ և բացարձակ առաւելութեամբ կընտրէ Պատրիարքը նոյն ցուցակներուն մէջէն :

— Կըսուի, թէ երբ եկեղեցական Համագումար Ժողով գումարի, ոմանք սլիտի առաջարկեն որ Ազգային Ժողովոյ ներկայ միամեայ սեպ ազգ ժամանակ եւեղեցական Համագումար Ժողովն ալ պաշտօնապէս սուգ առնու, և մեկ ամսէ յետոյ պատրաստէ պատրիարքական ընտրելեաց ցուցակը :

— Ըստ որոշման Քաղաքական Ժողովոյ, հանգուցեալ Ս. Պատրիարք Հօր յուղարկաւորութեան առթիւ կայսերական կառավարութեան կողմէ եղած մեծարանաց, և ըստ վերջին կամաց Ն. Սրբազնութեան, իւր և ազգին չընորհակալութիւնները Օգոստափառ Սուլթանին և Կայսերական կառավարութեան մատուցանելու համար Թագրիը մը գրուած էր անցեալ շաբթու առ Բ. Դուռն : Սրդ, Բարձր. Մեծ Եպարքոսը պատասխանագրով մը ծանուցած է Պատրիարքարանի թէ նոյն Թագրիին հաղորդած է Նորին Կայսերական Վեհափառութեան, և թէ՝ ցաւալի է կորուստն Տ. Ներսէս Ս. Պատրիարքի, որ գիտցած էր ըմբռնել Ցերութեան և Ազգին կապակցութեան իսկութիւնն, ինչպէս կը հաստատուի նաև իւր վերջին կտակաձև թղթէն : Քաղաքական Ժողովն ընթերցաւ ասյն պատասխանագիրն, և յետ այնորիկ ինչ ինչ տնօրինութիւններ ըրաւ, որպէս զի պատրիարքական ընտրութեան վերաբերեալ գործողութիւնք կատարուին ըստ հնաւանդ կանոնաց և իրաւանց Ազգին :

— Քաղաքական Ժողովն չորեքշաբթի օրը վերստին ի նկատ առնելով ազգային կալուածոց խընդիրն, հարկ դատեց առաջիկայ նստին մէջ խորհրդակցութիւն մ՚ընել այս խնդրոյն վրայ մայրաքաղաքիս գլխաւոր Թաղական խորհրդոց հետ :

— Կրօնական Ժողովն իմանալով որ Մալաթիոյ փոխառաջնորդ Տ. Մաղաքիա վարդապետ հրաժարած, և առանց Պատրիարքարանի գիտութեան՝ Ժողովուրդը լքանելով եւած Տիարպէքիր դնացած է, հեռագրով հրաման ղրկեց առ յիշեալ վարդապետն, որ փութայ վերադառնալ ի Մալաթիա Ժողովրդեան քով :

— Մօսուլայի Գեր. Տ. Յակոբ Քահանայ Սուրէնեանց, որ հանգամանօք է իւր ազգասիրութեամբ և հրատարակութեամբ, և որ մեծապէս նպաստած է մայրաքաղաքիս Հայ ընկերութեանց՝ Ռուսիոյ մէջ հանգանակութիւնները բանալով,—նախորդ ամսոյ 13ին վախճաներ է, և օծման ու յուղարկաւորութեան հանդէսք կատարուեր են մեծաւ չքով :

— Անկից 3–4 ամիս առաջ գըրած էինք, թէ Բիւխի (Սիլիվկիոյ վիճակ) մօտակայ չաղաչքի մը մէջ Հայ վարդապետ մը սպանուեր է, և ըստ Օսմանցի՛ք իրենց ձերբակալուեր ու քննութեան ենթարկուեր են : Ս.յժմ կիմանամք թէ սպանութեան ոճիրը գտատստանաւ հաստատուելով այն չորս անձանց վրայ, մին գլխատման, իսկ երեքը մշանջենաւոր չղթայակապ բանտարկութեան դատապարտուեր են, և թէ այս ծանր ոճրին չարժառիթ եղած է վարդապետին վրայ դտնուած 300 լիրան կողոպտելու միտքը :

— Խառն ժողովն՝ իւր վերջին նստին մէջ առաջարկութեամբ կրօնական ժողովականաց որոշեց, որ Հանգուցեալ Ս. Պատրիարք Հօր անուան յիշատակութիւնը չարուներկուի, մինչև ցրնարութիւն Պատրիարքի :

— Կրօնական ժողովը Պատրիարքական Գեր. Փոխանորդ Հայրն հրաւիրելով առաջարկեց որ ժողովոյն նիստերուն ներկայ դտնուի այսուհետև ի խորհրդակցութիւն : Հեռաւորաբար ընդունուած չհամարուիր՝ Նորին Գերապատուութիւնը կրօնական ժողովին ի բաց պահելու առաջարկութիւնը, զոր ըրած էին ժողովականք ոմանք նախորդ նստին մէջ, և մեք անպատեհ և վնասակար համարած էինք զայն :

— Միացեալ Ընկերութեանց կեդրոնական ժողովը կիւրակէ առաւօտ արտասովոր նստին մէջ որոշեց՝ մեկ ամիս ազգ դադար առնուլ, Մշոյ արական բարձրագոյն նախակրթարանը Ներսիսեան անուանել ի պատիւ հանգուցեալ Ս. Հօր, իւրովսանն մանակցիլ մահարձանի համար բացուած հանգանակութեան, և ամեն տարի Նորին Սրբազնութեան վախճանման օրը ծաղկեպսակ մը դնել չորմին վրայ :

— Ազգանուէր Հայուհեաց ընկերութիւնն ևս ազգ միամեայ դադար որոշած է :

— Կայսերական Սուլթանիկէ վարժարանի Հայ ուսանողաց կողմանէ քանի չափ ուսանողք կիւրակէ Դումդափուի Մայր եկեղեցին պսակ մը տարին Ս. Պատարագի ժամանակ, և մինչև ցաւարտ ժամերգութեանց ի տես ժողովրդեան բռնելին յետոյ հանգուցեալ Ս. Հօր դադարն վրայ դրին, և ապա Պատրիարքարան երթալով՝ ցաւակցութիւն յայտնեցին :

— Բողոքական ազգայինք այս օրերս քուէարկութեան ձեռնարկած են՝ իրենց ազգային երեսփոխանական ժողովոյ վերակազմութեան համար, որ մեծաւ մասամբ կազմուելածեալ էր : Մեծ փոյթ կը տանին արժանաւոր անձինք ընտրելու : Մեր այս ազգայնոց երեսփոխանաց թիւն 18 է, որոց 2ը՝ Պօլսէն, և մնացեալք գաւառներէն կընտրուին :

— Մայրաքաղաքիս բոլոր եւեղեցաց քարոզիչք հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցին կիւրակէ ի հանդիսատ հոգւոյ Տ. Ներսէս Պատրիարքի. դամբանականք լսուեցան, հոգեհանգստեան պաշտօնք կատարեցան և ամեն ուրեք խոստն բազմութիւն ներկայ էր :

—Ունճեան Աբիկ էֆէնտի ըստ իւր սովորութեան այս տարի ևս 40 չէքի փայտ նուիրած լինելով՝ Տնտեսական խորհուրդը չնորհակալեաց գիր գրեց առ նա :

—Տնտեսական խորհուրդն օգտակար դատեր է աճուրդի դընել Պատրիարքարանի պէտք եղած գրական պիտոյքն, և հրաւիրել թղթավաճառներն առաջիկայ չորեքշաբթի ի Պատրիարքարան սոյն աճուրդին համար :

— Տնտեսական խորհուրդն որոշեր է՝ ի պաշտօնէ ծանուցանել ազգայնոց, որ դրամ չվճարեն այն գանձանակաց՝ որք նոր և տպեալ արտօնագիր չեն կրեր, և գրաւելով այնպիսիներն՝ ղրկեն ի Պատրիարքարան :

— Անցեալ շաբթու հրատարակեցին, թէ հանգուցեալ Ս. Պատրիարք Հայրն յուղուեր է նամակի մը վրայ՝ զոր երկու բարձրաստիճան եկեղեցականք վերջին օրերս ուղղեր են, և գրած են եղեր թէ «Դեռ ևս չե՞ս հրաժարիր» : Սրդ՝ Պատրիարքական Գեր. Փոխանորդ Հայրն, ըստ որոշման Կրօնական Ժողովոյ, հանգուցեալ Ս. Պատրիարք Հօր ազնիւ եղբօրէն գրով տեղեկութիւն խնդրած լինելով՝ պատասխանագիր առեր է, թէ այդպիսի նամակ մը գոյութիւն չունի :

— Իւսկիւտարի Ս. Կարապետ եկեղեցւոյ Թաղական պատուաժան խորհուրդն՝ որ հանգուցեալ Ս. Պատրիարք Հօր դադաղին վրայ պսակ մը դրած էր, կիրակի օր ալ 3 ոչխար մատաղ ընելով բաշխեց Թաղին աղքատաց վասն հոգւոյ Նորին Սրբազնութեան : Հայկական այս հին սովորութիւնն՝ որ վերջին ժամանակներս տակաւ ի բաց կը թողուի իբրև աւելորդ ծախսուց պատճառ մը, դործադրելով այս առթիւ յիշեալ Թաղական խորհուրդը՝ գոհութիւն պատճառած է ամեն անոնց, որ դադաղի վրայ պսակ և ծաղկեփունջ դնելու նորամուտ սովորութենէն ընդդունելի կը համարին՝ վասն հոգ-

Հայ ննջեցելոյ, աղքատաց հայ ու միս բաշխելը։

(Թղթակցութիւնք Փունջի)

Տէդէ. 29 Հ-ի. 1884։ — Կառավարութիւնը խստիւ արգիլեց տեղւոյս Հայ լրագրաց՝ կամ-ուղիկոսական ընտրութեան խնդրոյն վրայ ո՛ր և է հրատարակութիւն ընել։

Վերջին օրերս գրաքննիչք ամենայն խստութեամբ կը քննեն Թուրքիայէն Ռուսաստան ղրկուած Հայ լրագրաց թերթերն, և անոնց շատ կողմերն անընթեռնլի կերպիւ սևելով կը յանձնեն տէրերուն, և այս՝ թղթատարութեան հանելէն մէկ քանի շաբաթ ետքը, ուրով լրագրոյն մէջ ծանօթ մանալ հիննալով կը կորուսանէ կարեւորութիւնն, և հետևաբար բաժանորդք մեծաւ դժգոհութեամբ կը գրեն Պօլիս որ իրենց անուամբ թերթ չղրկուի։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կրթական պաշտօնատան մէջ յանձնաժողով մը կազմուած է՝ որոյ պաշտօնը պիտի լինի միջնադարեան հանրային կրթութեան վերաբերեալ կանոնադրութիւն մը պատրաստել։

— Դատական պաշտօնատան դիւանագէտ Օգոստոս ամենաշնորհալին վճարել սկսան նախընթաց օրը։

— Դեսպանատանց թարգմանք երեկ Բ. Դուռն երթալով՝ տեսակցեցան արտաքին գործոց նախարարի խորհրդական Տատեան Էֆէնտիի հետ։

— Առաջին ատիճանի Օսմանեան պատուանշան տրուեցաւ Լեվոնտաֆիլ նախարար Բեռլիի վաչառական, և Նորին վսեմութիւնն երեկ Օգոստափառ Սուլթանին ներկայացաւ ի շնորհակալութիւն։

— Ռուսական դեսպան Պ. Նէլիւօֆ առաջիկայ շաբթու մէջ Բեղրատուրկ կուղևորի, փոխանորդ թողլով իւր խորհրդական Պ. Օնուն։

— Իտարէլի–Մախսուսէլի շոգենաւուց վարչութեան նոր գնած շոգենաւն անցեալ շաբթու Տրապիզոն ղրկուեցաւ։ Ի վերադարձին, պիտի սկսի երթևեկել Սև. րիվկան–Տրիպոլիս։

— Կըսուի, թէ Սուլթան Մէհմէտի կողմն Զարշամպայի թաղին մէջ և չրջակայքը դողեր տանց դրները բանալու վտիճեր կընեն, բայց բնակչաց աղաղակք անյաջող կը թողուն նոցա վտիճերն։

— Սրևեվեան–Րումէլիի կառավարութիւնը Պ. Հիրշի հետ կը բանակցի՝ Եամսօլիէն Պուրիազ երկաթուղի չինելու համար։

— Հինդչաբթի օրը Սուլթան Աբդուլ Համիտի մահմետական օրիորդաց վարժարանի մրցանակաբաշխութեան հանդէսը կատարուեցաւ։ Բարձրագոյն կարգի աշակերտուհեաց ոսկեայ մանեակներ բաշխուեցան, և բարեմաղթութիւնք ըրին, և բարեմաղթութիւնք ըզան վան կենաց Նորին կայսերական վեհափառութեան։

— Նախորդ ամսոյ վերջերն, Իզմիրէն Սէրայ դիւղ դացող շոգեկառքն՝ Այասլնի կայարանն հասած ժամանակ բաղխելով երկու բեռնակիր կառք չարդախուռոր եղեր են, բայց ուղևորներէն ո՛չ ոք վնասուեր է։

— Անոյս 2 ին, Այասլնի մէջ ջուժդին դեսնաշարժ մը պատահեր է, բայց բարերաղդաբար առանց ո՛ր և է վնասու։

— Չհաւատայով այն լուրը, թէ մայրաքաղաքիս գաղղիական դեսպանը չպիտի վերադառնայ Պօլիս, և Մաորիտ պիտի երթայ դեսպանութեան պաշտօնով։

— Լուր կայ, թէ Սրևեվեան–Րումէլիի կուսակալ Կավրիէլ փաշա մայրաքաղաքս կոչուած է՝ իբր դառամանայ պաշտօնավարութեան ընթացիկ վրայ ծանօթութիւն տալու համար, բայց չպիտի կրնայ ուղևորել, նահանգին ազգային ժողովոյ փակմանէն յառաջ։

— Դեռ ևս և պաշտօնէ հատուածած չէ Խարթում քաղաքի ապստամբաց ձեռքն անցնիլը կամ չանցնիլը. բայց անգլիական կանոնագոյն լրագրաց ամենքն ալ կը հաստատեն թէ, յիշեալ քաղաքը ամէն մէկ հետէ ապստամբաց ձեռքը կը գտնուի։

— Մայրաքաղաքիս անգլիական նախորդ դեսպան լորտ Տըֆըրին՝ Լոնտոնէն Հնդկաստան ուղևորեր է։ Կը կարծուի, թէ նորա հրաժարման վերջին թղթոց առ Օգոստափառ Սուլթանն մատուցանելու արարողութիւնը՝ կա՛մ գործակատարին և կա՛մ նորընծայ դեսպանին միջոցաւ պիտի կատարուի։

— Խեթանպուլ լրագիրն հերքելով Ե. քոտրայի մէջ ապստամբութեան մը ծագման ղրոյցներն, ծանօթութիւն կուտայ թէ արդարև Ալպանիոյ ցեղերուն մէջ տեղական կառավարութեան դէմ ապրստամբական չարժմանց նշանները երևեր են, բայց Մուսթաֆա Ասըմ փաշայի և կեդրոնական կառավարիչ Եուսուֆ Զիա փաշայի աշալրկութեան շնորհիւ բնաւ վըրդոված չէ խաղաղութիւնն, և ապրստամբութեան պարագլուխն հանդերձ խումբայդլ թղթով ձերբակալուեր է Ե. քոտրայի մերձակայքն։

— Առողջապահական միջազգային յանձնաժողովն այսօր սրտաստով նիստ պիտի ընէ՝ որոշելու համար թէ քարանձնայի ուրոշեալ ժամանակներն օ՛րէնաւ երկարել պէտք է։

— Սրևեվեան–Րումէլիի կուսակալ Կավրիէլ փաշա՝ որ Պուլղարիոյ իշխանութեան հետ մաքսային դաշնադրութիւն մը հաստատած էր, նահանգին ազգային ժողովոյ մէջ բնաւ չէ խօսեր այդ դաշնադրութեան վրայ, մինչդեռ Պուլղարիոյ իշխանը դովելով զայն՝ ըսած է թէ երկու առանձնաշնորհեալ նահանգաց վաճառականութիւնը պիտի ջարդանայ նոյն դաշնադրութեան շնորհիւ։ Հետևաբար կը կարծուի, թէ Կավրիէլ փաշա լռութիւն պահած է, որպէս զի խնդրոյ նիւթ չլինի՝ առանց Բ. Դրան հաւանութեան ինքնին գործելը։

— Վճռաբինդ դատարանի պատժական ճիւղին նշանաւոր անդամներէն Մուսթաֆա Նայիլի Պէյ՝ քանի մ՛օրէ հետէ պաշտօնատան չգնալուիր անձնական տկարութեան պատճառաւ։

— Ծայր կը պատմէ, թէ քանի մ՛օր յառաջ Իսկիւտար նէնիմահալլէ գողեր մտնելով Զիյէքճեան Յարութիւն անուն անձին տունն, ամէն արժէքաւոր բան առեր խլած տուեր են, և տանտէրն գողերուն երթալէն յետոյ հանդերձները չդտնելով սոսկութիւնը կը դրայիներէն հանդերձ առնուլ. և թէ՝ թէև ոստիկանք կը. ջանան գտնել գողերն, սակայն կասկածելի է նոցա յաջողութիւնը։

Նոյն լրագիրը կը գրէ, թէ երկու օր յառաջ Երիկուն մը Բերա Պայրամ փողոց հինգ գող յարձակելով մահմետականի մը վրայ՝ ժամացոյցն ու դրամն յափշտակեր, և քիչ մը յետոյ 3 վիրա առեր են պուլղարէ մը։

— Ունգափան Հաճը–գասըն ըռուած տեղը մահմետական սըղայոյ համար մանաւոր վարժարան մը կը բանան կրթական պաշտօնականներն Ակհահ, և տրոյ վերաուսոյցութեան քարտուղարներն Դաարի էֆէնտիներն։ Տե՛ս, թէ վերջին տարիներս կրթութեան և դաստիարակութեան համար ո՛րչափ մեծ փոյթ և եռանդն կայ մահմետականաց մէջ ի մայրաքաղաքիս և ի գաւառս։

— Որքոյ ժառանգութեան վարչական ժողովոյ անդամներէն Աչիր և Քեամիլ էֆէնտիներու դատաստանը կրսկսի առաջիկայ երկուշաբթի։ Սոքա ամբաստանեալ են, թէ հանգուցեալ Մուսթաֆա Ցազըլ փաշայի ժառանգական դործոյ մէջ նենգութեամբ վարուած են։

— Օգոստափառ Սուլթանն առաջին կարգի Օսմանիէյ պատուանշան չնորհեց դատական նախարարի խորհրդական Վահան էֆէնտիի։

— Անգղիոյ երեսփոխանաց ժողովոյ Նոյեմբեր 13 ի նստին մէջ արտաքին գործոց նախարարի խորհրդական Լորտ Ֆրէդ Մորիս յայտարարեր է, թէ անգղիական կառավարութիւնը դիտողութիւններ ըրած է Օսմանեան կառավարութեան Փոքր–Ասիոյ մէջ նեղմուծելի բարենորոգմանց համար, և թէ Կ. Պոլսոյ անգղիական դեսպանը նոր հրահանգներ պիտի ըստանայ ի մասոյ յայսմ մասին։

— Դայմագամութեան ատիճան արուեցաւ՝ կայսերական երկրորդ բանակի կեդրոնական հիւանդանոցի երկրորդ բժիշկ Հազարապետ Յովհաննէս էֆէնտիի։

— Լոնտոնի Սթարթալի անուն յունական մեծ դրամատունը վճարմունքը դադրեցուցեր է՝ 800000 անգղիական լիրայի բայով։ Մայրաքաղաքիս դրամատանց ոմանք 100 հազար լիրայի չափ պահանջք ունին յիշեալ դրամատան վրայ։

— Թուրք լրագրիք գովեստիւք կը հրատարակին՝ կայսերական անձնական դանձուն նախարար Վահեմխայլ Յակոբ փաշայի մէկ գործն ևս։ Նորին վսեմութիւնը նկատելով, որ վարդի մշակութիւնը չհասեր է բայց մինչև յարդ ո՛չ ոք ձեռնարկած է յայդ՝ սա՝ նախապաշարմամբ թէ միայն Սրևեվեան–Րումէլիի Գըզանլըգ գաւառին մէջ կըյաջողի նորա մշակութիւնը, – վարդի հաղարաւոր տունկ բերել տուած էր, և որովհետև՝ հակառակ ծանուցեալ նախապաշարմանց՝ մեծ յաջողութիւն տեսնուած է, արդ Նորին վսեմութիւնն որոշեր է կայսերական բոլոր ագարակաց մէջ մեծաննել վարդի մշակութիւնը։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Փարիզի մէջ քօլերային եռեւումն չէ կրցած մեծ երկիւղ տալ հասարակ ժողովրդեան, բայց վերին ստիճանի մարդիկ ամենաննայներէն աւ ահի չեն վերադառնար մայրաքաղաքն, և կը կարծուի թէ պիտի մնան մինչև գիսպատ անհետանալ ախտին։ Այս վիճակը բաւական տադնապ կուտայ արհեստաւորաց ու թատրոնապետաց, որ ձմրան մէջ կրնան մեծամեծ առեւտուրներով հատուցարակշռել իրենց հաշուէյոյցներն։ Փարիզի քաղաքապետութիւնը մեծաւ խնամով կաշխատի հիւանդութիւնն անհետելու համար, և մարքուիզեան վերակացուք գրեթէ ամեն օր ելեմուտ կընեն տուներն ու սենեակներն, ջանալան մարդոյ դէղերով ու ծխումներով։ Այս խնամոյ չնորհիւ է, որ քօլերան չճարակիր, և հիւանդացողներուն թիւն յարդ յիսունը չանցաւ, և վերջին օրերս հետզհետէ նուազիլ սկսած է։

= Գերմանիոյ ազգային խորհրդարանը բացուեցաւ։ Կայսեր ճառը խաղաղութեան յոյս կընծայէ։ Կայսրն ըսած է, թէ երիտ կայսերաց վերջին տեսակցութիւնն առաւել ևս ամրապնդած է բարեկամական յարաբերութիւնները։

= Գաղղիոյ ղօրավարք կը հերքեն ա՛յն ղրոյցը, թէ ի Թոնքին գաղղիացիք սրէ անցուցած են 300 չինական ղինուոր գերիներ։

= Ըստ եւրոպական լրագրաց՝ Աւստրիոյ կառավարութիւնը թիւրգիոյ նահանգէն գաղթականներ կը դրկէ կը բնակեցնէ Պօսնայի և Հէրսէգի այլև այլ կողմերն, և մտադիր է երկաթուղի չինել Գաղմատիայէն Պօսնա։

= Աւստրիոյ եկմեական նախարարն ի Բէչթա առեւնախօսութեան մէջ ըսեր է, թէ Պօսնա–Հէրսէգ նահանգաց առժամանակեայ դրաւումն ժամանակ մի ևս պիտի տևէ։

= Անգղիոյ արտաքին գործոց նախարարը մեծաւ լրտական խընճոյքի մը մէջ յայտարարած էր, թէ Անգղիոյ կառավարութիւնը չը պիտի զլանայ իւր բարեկամական միջնորդութիւնն Գաղղիոյ և Զինաստանի խնդրոյն կարգադրութեան համար։ Արդ՝ կըսուի, թէ յիշեալ խնդրոյն դեռ ևս անլոյծ մնալն Անգղիոյ վաճառականական մեծ գործոյ մէջ նենգութեամբ վարուած են։

— Օգոստափառ Սուլթանն առաջին կարգի Օսմանիէյ պատուանշան չնորհեց դատական նախարարի խորհրդական Վահան էֆէնտիի։

— Անգղիոյ երեսփոխանաց ժողովոյ Նոյեմբեր 13 ի նստին մէջ արտաքին գործոց նախարարի խորհրդական Լորտ Ֆրէդ Մորիս յայտարարեր է, թէ անգղիական կառավարութիւնը դիտողութիւններ ըրած է Օսմանեան կառավարութեան Փոքր–Ասիոյ մէջ նեղմուծելի բարենորոգմանց համար, և թէ Կ. Պոլսոյ անգղիական դեսպանը նոր հրահանգներ պիտի ըստանայ ի մասոյ յայսմ մասին։

— Դայմագամութեան ատիճան արուեցաւ՝ կայսերական երկրորդ բանակի կեդրոնական հիւանդանոցի երկրորդ բժիշկ Հազարապետ Յովհաննէս էֆէնտիի։

— Լոնտոնի Սթարթալի անուն յունական մեծ դրամատունը վճարմունքը դադրեցուցեր է՝ 800000 անգղիական լիրայի բայով։ Մայրաքաղաքիս դրամատանց ոմանք 100 հազար լիրայի չափ պահանջք ունին յիշեալ դրամատան վրայ։

— Թուրք լրագրիք գովեստիւք կը հրատարակին՝ կայսերական անձնական դանձուն նախարար Վահեմխայլ Յակոբ փաշայի մէկ գործն ևս։ Նորին վսեմութիւնը նկատելով, որ վարդի մշակութիւնը չհասեր է բայց մինչև յարդ ո՛չ ոք ձեռնարկած է յայդ՝ սա՝ նախապաշարմամբ թէ միայն Սրևեվեան–Րումէլիի Գըզանլըգ գաւառին մէջ կըյաջողի նորա մշակութիւնը, – վարդի հաղարաւոր տունկ բերել տուած էր, և որովհետև՝ հակառակ ծանուցեալ նախապաշարմանց՝ մեծ յաջողութիւն տեսնուած է, արդ Նորին վսեմութիւնն որոշեր է կայսերական բոլոր ագարակաց մէջ մեծաննել վարդի մշակութիւնը։

= Պարսկաստանի Գարատաղ գաւառին մէջ ապստամբութիւն մ՛ելնելով՝ կառավարիչն սպանուեր, քանի մը հայ գիւղեր աւարի առնուեր, և բնակչաց բաղումք ռուսական երկիրն ապաստաներ են։ Պարսկաստանի գահաժառանգ իշխան Մուղաֆէր–էտ–Տին, որ Աթրպատականի կառավարիչ է, Դաւրէժէն Գարատաղ դնացեր է ամսոյս 8 ին, իւ վերահաստատութիւն բարեկարգութեան։

= Ոսոգովի մէջ ձերբակալեալ են իբր 80 անձինք, յորս կան քանի մը աղնուականք և կանայք, կը կարծուի ընդհանրապէս, թէ այս ձերբակալութիւնք ոչնչակաշնայ մէկ նոր դաւադրութեան երևան ելնելուն հետևանք են։

= Ռուսիոյ Թամպի նահանգին Պիչաք քաղաքին մէջ, «Եղբայրակցութիւն Ս. Տիմիդրեայ» անուամբ ընկերութիւն մը կազմուեր է, ազնուագոյն աճումն և ծաւալումն արդիլելու համար կղերին ըրած չանիյ օժանդակելու նպատակաւ։

= Պէրլինի կառավարութիւնը մայրաքաղաքին արուարձանց՝ հանրապետական գաղափարներ պաշտպանող քանի մը դաղղիացի խմբագիրներու Ա. յս արուարձանի դէմ բողոքել որոշելին հանրապետականք, 1000 հոգի ժողովուելով յատկապէս։

= Ռուսիոյ, Բոլնիոյ, Գերմանիոյ և Աւստրիոյ դիմաւոր քաղաքաց հրէից կողմանէ պատուիրակք համախմբուեալ են ի Քազանվից (Սիլեզիա), և կը խորհրդակցին՝ Պաղեստինի մէջ հրէական դաղթականութիւնն յառաջ տանելու միջոցներուն վրայ։ Ա. յս նպատակաւ 10000 անգղիական լիրա հանգանակած են արդէն։

= Ամերիկայի մէջ մեծ գումարներ դրաւ դրուած էին նախագահական ընտրութեան արդիւնքը գուշակողներու կողմանէ։ Մինչև նոր քաղաքին մէջ կէս միլիոն տոլարէն աւելի գումար դրաւ դրուած էր։

= Պէրլինի երևելի սեղանաւորք, Պարոնայք Պլայթրէօտըր, օգնութեամբ Ռոչիլտի դրամատան, Ռուսիոյ եկմեական նախարարութեան առաջարկեր են յոյժ կարևոր և ընդարձակ ծրագիր մը, որով Ռուսիոյ արտաքին փոխառութեանց բոլոր արժեթուղթք պիտի միանան ա՛յնպիսի եղանակ մը, որ պիտի թերևցնէ Ռուսիոյ տարեկան բեռն ի մասին գրեթէ քառասնորդի և տոկոսաց։

= Գերմանիոյ մէջ ևս սկսած են ի հուր այրել մեռելոց մարմինները փոխանակ ի հող ամփոփելու։ Մօտերս ի Շտուդկարտ վարձան եալ բժիշկի Տուլբի մարմինը կոթա վոխադրուեր է այրելու համար, որուն յատկացեալ դործիք մը կայ ի Բոպուրկ մինչև յարդ հրկիզեալ են 200 մեռելոց մարմին, որոց 126 ը՝ այր, 69 ը՝ կին, և 5 ը՝ աղջ. են։

= Պօսնա–Հէրսէգի մէջ այժմ կան 140 նախակրթարան, որոց 64 ին մէջ քանի մը կրօնէ տղայք խառն կը կրթուին, և 74 ն յատուկ են այս կամ այն դաւանութեան։ 8,745 աշակերտք կը յաճախեն այս դպրոցները։ Մահմետական աշակերտաց թիւն, որ անցեալ տարի 443 էր, այս տարի 723 ի բարձրացած է, և ամեն ուրք դեռատի մահմետականք կրթութեան դովելի փափաք մը ցոյց կուտան։ Մօտերս Պօսնա–Սէրայի մէջ բացուած Լիսէն կը յաճախեն 164 աշակերտք, յորոց 17 ը մահմետական են։ Մահմետական բնակիչք տակաւ կը համակերպին դինուորագրութեան օրինաց։ 1883 ին, դինուոր գրուելոցն 308 մահմետականք, 606 օրթոտոքս և 401 հռոմէականք. իսկ այս տարի գրուելոցն 401 մահմետականք, 562 օրթոտոքսք և 259 հռոմէականք։

ՎԱՆԻ ՄԱՍՆԱՒ (*)

Թօխօսիլ ինչ ոյնքան դիւրին է, ի տասնհինգ տարիներ ի վեր, որքան ատիկա ինծի համար դարձած է ամէն օր աւելի դժուար։ Ինչ որ ես գիտեմ, ինչ որ ես կրցայ տեսնել եւ լսել, ինչ որ ես կրցայ հասկնալ, ատիկա ինծի համար ամէն օր աւելի եւ աւելի կը դառնայ անհասկնալի։ Ես կը տեսնեմ, որ ամէն ինչ, որ ես կը կարծէի թէ գիտեմ, ամէն ինչ, որ ես կը կարծէի թէ հասկցած եմ, ամէն ինչ, որ ես կը կարծէի թէ ճանչցած եմ, ամէն ինչ, որ ես կը կարծէի թէ կրցած եմ ըմբռնել, ամէն ինչ, որ ես կը կարծէի թէ կրցած եմ ներկայացնել, ամէն ինչ, որ ես կը կարծէի թէ կրցած եմ արտայայտել, ամէն ինչ, որ ես կը կարծէի թէ կրցած եմ բացատրել, ամէն ինչ, որ ես կը կարծէի թէ կրցած եմ մեկնաբան

նաւած են, եօթը խաւէ բաղկացեալ, և այնպէս յօրինած են որ առանց դժուարութեան մէկ խաւը պատուելով տակէն նոր ու մաքուր կրծնոց մը կելնէ։ Հեղինակն իր այս գիւտն աւելի հաճելի ընելու համար, շապիկին յետնակողմն հետաքրքրական պատմութիւն մը տպել տուած է, յայտնելով թէ այդ խաւն ալ պատուելով տակէն ուրիշ մը պիտի գըտնուի։

×× Ի Մէդեբա դատարան դըժխաամարը չեն պատժեր աճպարդործն, այլ այնպիսի տանջանք մը կուտան, որոյ անվրիպելի հետեւանքն է մահ։ Այս է գաւազանահարութիւն. բայց կարծես թէ տեղւոյն չարագործաց մարմինք կարող են տակաւ ամենագառն չարչարանաց։ Պ. Յօն Հէտչըքրէօմ կը պատմէ պատիժ մը, որ իրքուդքի մէջ տեղի ունեցած է։ «Այն առեն, յորում խարազանք 16 ճունտ ծանր էին, մինչ այժմ ըստ օրինի երկու ճունտ կը կշռեն, մարդ մը փախչելով մահու, այն է ղղուելով ի կենաց, ոճիր մը գործած էր. կառավարիչն օրինակելի կերպով պատժելու համար զնա՝ 180 հարուածոց դատապարտած էր. երկու անգամէն, այսինքն՝ ամէն մէկ անգամուն 90 ական գաւազան պիտի ղարնուէր։ Ոճրագործը մերկացնելով՝ կոճղի մը կապեցին, և 90 հարուած տալէն ետքը հիւանդանոց փոխադրեցին. մարմինը տան և հինգ օրէն կաղդուրելով՝ պատժոյն միւս մասն ալ կրելու վիճակի մէջ գտնուելու։ ուստի 90 հարուածն ևս տուին. բայց այդ անգամուն ալ չէ մեռած, և վերստին մէկ շաբաթէն առողջացած է, և ա՛յդ՝ ձմեռ լինելուն համար, վասն զի այս եղանակին մէջ գանահարելոյն բժշկութիւնը յոյժ դժուար է։ Եթէ թեթեւ պատիժ մը ետքը՝ հարուածելոյն փոքր ինչ օղի տըրուի, սովորաբար կը կազդուրի. բայց եթէ ուզուի յանցաւորն չապրեցնել՝ քիչ մը ջուր կը քաշեն մարմնոյն, և ապա կը հարուածեն, որով դրեթէ անմիջապէս կը մեռնի։ Երկրին այս խիստ պատիժներն յարմարած են այդ ոճրագործից բնաւորութեան, որ դերմարդկային կը համարուի»։ Քիչ ետքն ճանապարհորդը կը պատմէ թէ «Իր.քուշքի մէջ կառապանութեամբ ապրող աքսորեալ ոճրագործ մը, ոճրագործութեան միտքը դգալով, պատիժը թեթեւցնելու դիտումով ազատած է դկառավարիչն, որ շղթայակապ ընեն զինքն, մինչեւ որ այդ միտքն անհետ։ Երեք օր շղթայակապ մնալէ ետքը, ազատած է վերստին քանիել շղթաներն և արձակել, ըսելով թէ այդ միտքն անհետացած է, և թէ՝ կրնայ անվնաս աշխատիլ»։

××× Մանրավէպ.

Աւստրիոյ Ժոզէֆ Բ. կայսրն, 1777 ին, կոմս Թալբէնհէյմի անուամբ Փարիզ դնացած էր, և մեծ հաճոյք կզգար՝ ծպտեալ շրջագայիլ Ժողովրդեան մէջ և զբօսանքներն այցելելէ։ Իրիկուն մ՚ալ զբօսարանի մը մէջ հասարակ քաղաքացւոյ մը հետ խօսակցութեան բռնուելուցաւ, որ առաջարկեց իրեն՝ մաս մը սաւորինչ խաղալ։ Կայսրն հաճեցաւ. խաղացին և կայսրը կորոյս։ — «Այժմ վճռարէնը պիտի խաղանք», ըսաւ կայսրն՝ յաղթողին։ — «Ուրիշ աւուր համար հաճութեամբ կընդունիմ ձեր առաջարկութիւնն», ըսաւ վարիղացին, «բայց այսօր ներեցէք ինձ. այժմ Օպերայի թատրոնը պիտի երթամ, վասն զի կը փափաքիմ տեսնել Ա. ւըստրիոյ կայսրն»։ — «Ինչը պիտի տեսնէք», յարեց կայսրը, «կապահովցնեմ դձեզ որ նա ալ մեզի նման մարդ մ՚է»։ — «Բայց չերմ փափաք մ՚ունիմ զնա տեսնելու, և խօսակցելու այդ ընտիր վերհասելոյն հետ. ոչ ոք կրնայ արգելուլ իմ այս բաղձանացս կատարումն. մեծ մարդ է նա»։ — «Ուրեմն այդ պատճառա՞ւ է, որ թատրոն երթալ կուզէք» — «Ա.յո՛, միայն այդ պատճառաւ»։ — «Եթէ այդպէս է՝ կրնանք խաղալ, վասն զի ե՛ս եմ Աւստրիոյ կայսրը»։

— Երբ Նաբոլէոն Ա. 1808 տարւոյ վերջերն, անգամ մ՚ևս մեծ ճգամբ ընկճած էր Պռուսիա, Սէվիլա քաղաքն ևս նորա տիրած մասին մէջ էր. ուստի պատուիրակ մը դրկելով Սէվիլայի կառավարչին՝ ըսել տուաւ, որ կայսրն եթէ քաղաքը զինու զօրութեամբ առնու, Սէվիլայի համայն բնակչաց մորուքներն ածիլել պիտի տայ։ Կառավարիչն առանց չփոթելու այդ դըսպառնալիքին՝ ըսաւ թէ, «Ցայնժամ նորա տիտղոսը պիտի լինի կայսր Դաղղիոյ, արքայ Իտալիոյ և սէրեա Սէվիլայի»։

—Մանկամարդ կին մը, ծրար մը և ման մը բռնած՝ գերեզմանատան մը դրնէն ներս կը մտնէ. պահառուդն հետեւելով նմա, և տեսնելով որ նորատիպ գերեզմանի մը վրայ խոտ հունտ կը ցանէ, կը յանդիմանէ թէ քիչ ժամանակէն գերեզմանին վրայ դալարիք պիտի բուսանին, և կըսէ թէ ինքն անուշտ այրի մը լինելու է։ Կինն առանց մտածելու կը պատասխանէ, թէ «Ես ալ արդէն դալարեայ բուսանելուն կը փափաքիմ, վասն զի իմ բարեպաշտ այրս խոստումն առաւ լինէ, չմոռնանալ մինչև որ գերեզմանին վրայ խոտերը բուսանին. արդ քանի որ լաւ բաղդ մ՚ելած է լինձի համար, կուզեմ որ նորա գերեզմանը շուտով դալարի, որպէս թէ՝ ես խոստումն կատարած կը լինիմ, և թէ՝ երկար չեմ սպասեր»։

ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ(*)

Թ է Ց

Ձմեռատանի մէջ գանուած ծառի մը տերևներն են Թէց ըսուածը, յորմէ ճաշուն և ապա Պրազիլիա փոխադրուած է։ Կանանչ և սև Թէյը մի և նոյն տերևն է, որ աւելի շատ չորնալով սև գոյնը կառնու։ Ձինայիք կանանչը միւսէն աւելի կը յարգեն։

Անմարսողութեան դէմ սովորական դեղ մ՚է Թէյը. արեան չրջանը կը զօրացնէ, մէզը կառատացնէ և քիչ մ՚ալ կը քրտնեցընէ։ Սա ալ սուրճին նման ջղային դրութեան վրայ մեծ ազդեցութիւն ունի. գաւաթ մը Թէյին վերջը, յիշողութիւնը սուր և գաղափարները վայրկեան կը լինին. իսկ քուն խանգարելու յատկութիւնն աւելի է քան սուրճինը. մանաւանդ կանաչ Թէյինը. միայն Թէ վարժութիւն ունեցողներն այս անհանգստութիւնը չեն ունենար շատ անգամ։ Միայն չափահասներու յարմար է այս ըմպելին. պէտք չէ տալ ո՛չ տղայոց և ո՛չ աղջկանց. սակայն ծերոց համար յոյժ օգտակար կրնայ լինիլ իր պնդողական յատկութեամբը։ Թէյը գլխի ցաւ կուտայ չղտաններու. Թէյի չափազանց գործածութիւնը շատ անգամ ստամոքսի ցաւ, չղայնի դող և գունատութիւն յառաջ կը բերէ, զորս անգղիացիք լաւ գիտեն. իսկ ռուսերն ուշադրութիւն չեն ըներ։ Թէյը պատրաստելէն անմիջապէս եռացը խմելու է. եթէ ջրոյ մէջ երկար մնայ՝ չուրը լեղի համ մը կառնու։

Եւրոպացին արտածեալ Թէյերուն ամենքն ալ խարդախեալ են. կանանչը կը ներկուի. ուստի սև Թէյին ընտիրը ճանչնալու համար՝ պէտք է առնուլ ա՛յն տեսակն, որոյ տերևներուն ծայրերն արծաթի նման վայլուն են։

ԳԱՐԵՋՈՒՐ

Թուրքիոյ մէջ դժբաղդաբար սովորութիւն չէ եղած շինել այս ըմպելին, որ օղիէն շատ առաւելութիւն ունի, և որոյ պատրաստութեան համար պէտք եղած բոյսերն առատ են այս երկրին մէջ։ Գործերոյ հայրենիքը դրեթէ Գերմանիա է, ուր մեծ քանակութեամբ կը գործածուի։ Ներկայ տարւոյս մէջ, գերմանացի մը իր հարիւր հազարերորդ բաժակն հանդիսաւոր կերպիւ խմել ուզելով բաղեւհամայսը խնճոյք մը տըւած է. այս թուոյն հասած է քսան տարիին՝ հաւատարիմ արբեցութեամբ։

Գարեջուրը հին ատեններն ալ ճանչցուած է. Եգիպտացիք գիտէին, և Մովսէսի առեն գարեջուր կար։ Զանազան անուններ առած է այս ըմպելին, ինչպէս, ապէլ, բօռեր, օ-էյոյճ։

Գարեջուրն ընդհանրապէս գարիւով և հո-պլըն ըսուած տեսակ մը խառով կը շինուի. իսկ գարիին տեղ կը գործածեն նաև յորեան, հաճար, վարսակ, յորոց շինուածն առաջին տեսակ կը սեպուի։ Եւրոպիոյ մէջ յարգի է Պավիերայի և Պիւրթէնպէրկի գործարանայց շինածն։ Անգղիացիք ալ ունին գարեջուր մը, որ շատ ալքոօլ կը պարունակէ, սովորականներէն աւելի զօրաւոր է, և զոր կանուանեն (ale, porter)։

Գարեջուրը դինւոյ նման անընդհարար ըմպելի մ՚է. անկէ նուազ զօրաւոր, և խիստ յարմար է այն ոտանգքներու՝ որք դիւրազգայ լինելով կը դրդռուին դինիով. ինչպէս տկար և նիհար կազմուածք ունեցողներն։ Տղայոց ալ կրնայ արուիլ։ Սորա գործածութիւնը կերակուրի առեն պէտք է լինի ինչպէս դինին, որոյ հետ միանալով մնուցեղը՝ կը կրկնապատկուի. բայց երկուքն ալ իրենց չափովը պէտք է լինին, զոր կը ճշդենք թուանշաններով։

Զափահաս մէկուն համար՝ 24 ժամու մէջ 13 տրամ զուտ ալքօլը բաւական է. ուստի իւր խմած ըմպելեաց տեսակը չատցնելով՝ ալքօլին չափն անցնելու չէ. և քանի որ սովորական դինիներն 100ին 12 ալքօլ կը պարունակեն, ուրեմն կերակրոյ հետ միայն դինի խմողներու համար օրը 120 տրամ դինին բաւական է. այս չափէն դուրս խմուածն աւելորդ և անօգուտ է. իսկ գարեջուրը 100 ին 4 ալքօլ ունենալուն համար՝ 325 տրամը կը հատասարի դինւոյն յիշեալ քանակութեան. ուստի կերակուրի հետ թէ՛ գինի և թէ՛ գարեջուր խմել ուզողներու համար համեմատութեան չափ մը կայ, զոր պէտք չէ կորնցնել։

Այս ըմպելին մէջը կառատացընէ և անոր գործարանին վրայ մասնաւոր ազդեցութիւն մ՚ունի, այնպէս որ առանց դադարի անգամ գարեջուր խմողներու համար դանազան տեսակ ախտեր անյայտանալով՝ ամենայն առողջութեան դերագոյն գոն թափուր կը գտնուի, Սոյն կաթուղիկոսական խնդրին կը յուզուի դեռ եւ Պալաժնիկայի բարեփոխութեան վրայ կխօսուի։ Գեր. Իզմիրլեան քաջ հետաղօտած ու իմաստասիրած է զայս ամենայն, եւ լուսաւոր ծանօթութիւններ կընծայէ հետաքրքնին Հայոց։ Գրքին սկիզբը դրուած ցանկը աչքէ անցունողն պիտանիանէ, թէ ո՛րչափ նշանաւոր անձեր նշանակեալ են խնամով, եւ քանի՛ նըշխարական ու մեծարելի է Հայկական հարցութեանց միակ մեծագործն եղող Հայրապետութիւնն։ կարժէ, որ ամեն Հայ ունենայ հատ մը. կարժէ որ ամեն Հայ թանգարանի մէջ գլխաւոր տեղ մը բռնէ այս Գիրքը։

Կրնանուի լրագրոյս Գրասենեակը, Պօլիս Պալըդ-բաղար Նաֆիկէ-խան վերի յարկ թիւ 16. Պաղէշ-գարու Զըբաչեան Պօղոս աղայի խանութը։ Կը բաղկանայ 1300 երեսներէ։

PILULES HOLLOWAY
ԴԵՂԱՀԱՏՈՒԿ ՀՈՒԼԼՕՈՒԷՅԻ

Լեարդի, ստամոքսի եւ պղիքներու ամեն տեսակ անկարգութեանց համար խիստ ընտիր է այն դեղահատը, որուն ջղային ախտաբութեան ուժգնախութեան եւ տկարութեան համար. կը ջնջէ եւ անհետ կընէ ամեն տեսակ անկանոնութեանց հետքերը։ Արիւն եւ երիկամանց վրայ օգտակար ազդեցութիւն մը ունի. արիւնը մաքրելով՝ նորա խանգարեալ վիճակը կը կանոնաւորէ եւ գրգռելով կենսական գործարանները կը զօրացնէ։ Իւր դեղական մեծ ազդեցութեամբ արտախառնութիւն, կծուութիւն, մաղձային հիւանդութիւններ, որովայնի մէջ լցուած կազեր, գլխի ցաւեր կվանէ, մարսողութիւնը կչափաւորի, եւ մարմինը մաքրուելով բոլոր այն աղտեղութիւններէ որ չատ անգամ զանազան հիւանդութեանց ընկերակցութեամբ կըլլան, առողջ ուժեղ եւ քնական դիրքը կզգենու,

ONCUENT HOLLOWEY
ՍՊԵՂԱՆԻ ՀՈՒԼԼՕՈՒԷՅԻ

Մորթային հիւանդութիւն եւ վերք բուժելու մասին ունեցած պալատական յատկութեանցը չհաւատարիր բընաւ ուրիշ դեղ մը. հին կամ նոր թուրնաւոր վէրքեր, ուռեցք, քաղցկեղ (չիբիճընէ), սրունքից եւ ատեանց վէրքեր կամ բոլորովին կանցնին եւ կամ կլաւանան. օգտակար է նաեւ հարբուխի, հազի, սրտի բաբախման, մանաւանդ օդացաւ (եէկ) բուռած հիւանդութեան։ Իւր կազդուրիչ եւ զօրաւոր ազդեցութեամբը խոշ (աբրաճ) հիւանդութեան ապականիչ զօրութիւնը ինչ ատելեան որ ըլլայ կը դիմագրաւէ։

Այս դեղերուն գործածութեան եղանակը նշանակուած է իւրաքանչիւր տփի վրայ, որ կգտնուի ամեն դեղավաճառներու քով, եւ մանաւանդապէս Պազէ-գարու թաշ-խանի կողմերը Պ. Գասպարեանի դեղարանը, թիւ 7, կը ծախուի։

Աւելի առնել ուզողը կը հրաւիրուի առ հեղինակն օգթօր Հոլլօուէ իւ Լոնտոն Օքսֆօրտ փողոց թիւ 533։

ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՑ
ԵՒ
ԱՂԹԱՄԱՐ ՈՒ ՍԻՍ

Գեր. Տ. Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեան գրած է Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ ընդհանրական հայրապետութեան, եւ Աղթամարայ ու Սսոյ կաթուղիկոսութեանց հաստատութեան, իրաւասութեան եւ պարտուց ու պաշտաման վրայ, պատմութեամբ՝ արձանագրութեամբ եւ հին ու նոր վաւերական պաշտօնագրովք հաստատեալ զամենայն։ Ընթերցողն լիուլի ծանօթութիւն կստանայ Հայաստանեայց Հայրապետութեան եւ Աղթամարայ ու Սսոյ անցեալ եւ ժամանակակից վիճակաց վրայ։ Անշուշտ ենք, թէ մեծ կարեւորութիւն ու օգտակարութիւն ունի այս հրատարակութիւնը, մանաւանդ ներկայ ժամանակիս մէջ, յորում ամենայն Հայոց Հայրապետութեան դերագոյն գոն թափուր կը գտնուի, Սսոյ կաթուղիկոսական խնդիրն կը յուզուի դեռ եւ Պալաժնիկայի բարեփոխութեան վրայ կխօսուի։ Գեր. Իզմիրլեան քաջ հետաղօտած ու իմաստասիրած է զայս ամենայն, եւ լուսաւոր ծանօթութիւններ կընծայէ հետաքրքնին Հայոց։ Գրքին սկիզբը դրուած ցանկը աչքէ անցունողն պիտանիանէ, թէ ո՛րչափ նշանաւոր անձեր նշանակեալ են խնամով, եւ քանի՛ նըշխարական ու մեծարելի է Հայկական հարցութեանց միակ մեծագործն եղող Հայրապետութիւնն։ կարժէ, որ ամեն Հայ ունենայ հատ մը. կարժէ որ ամեն Հայ թանգարանի մէջ գլխաւոր տեղ մը բռնէ այս Գիրքը։

Կրնանուի լրագրոյս Գրասենեակը, Պօլիս Պալըդ-բաղար Նաֆիկէ-խան վերի յարկ թիւ 16. Պաղէշ-գարու Զըբաչեան Պօղոս աղայի խանութը։ Կը բաղկանայ 1300 երեսներէ։

ՆԿԱՐԱԴՐԱԿԱՆ
ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ Ի ՀԱՑԱՐՆԱԿ
ԳԱԻԱՌՍ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ
ՏԵՂԱԴՐՈՒԹԻՒՆՔ
Սաբէն և Զաբէն, Հէյէն և Նաբէն
Պէտռոն էֆենտոյ
ՄԱՍՆ Ա.Ռ.Ա.Զ.Ի.Ն
Տէղէրեց Մ. Կ. Մէբախոբեան

Այս նոր երկասիրութիւնն կը խօսի ղազմանց և մտաց հետ՝ տեղեկագրելով և նկարագրելով երկրի դլխաւոր գաւառաց և տեղեաց հին և նոր ընդհանուր երեւոյթները։ Այս գործն, որ կը բաղկանայ 208 երեսէ, իւր նիւթերով, նոր ուղղութեամբ, աճով, ճոխութեամբ և դասակարգութեամբ կարժէ դանուիլ ամեն Հայ մատենադարանի մէջ, ուսանողաց հասկացողութեան մէջ և վերջապէս ամեն Հայ սրտից մէջ։

Կը դանուի բոլոր գրավաճառաց քով ի գին 8 ղրշ։

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԻՐ
Հ. Ս. Ա.Լ.Ա.Ճ.Ա.Ճ.Ե.Ա.Ն

ՏՊԱԳՐ. Ս. Ղ. ՊԱՐՏԻԶԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ.
Բիզա-փազա խան թիւ 3

(*) Փարիզէն մեր մեծապատիւ բարեկամն տոքթոր Սեդրոսեան ի հրատարակութիւն ղրկած է մեզ առողջաբանական յօդուածոց խումբ մը, յորոց երկուքն կը հրատարակեմք այսօր, անչուշտ լինելով որ մեծապէս պիտի օգտին աղնիւ ընթերցողք, վասն զի յօդուածներն ղրուած են պարզ ու ժողովրդական լեզուաւ և առողջաբանական կարեւոր տեսութեամբ։